


25.160

2-54340-1A-1836

23641.60

ՊԵՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ
ԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՆԵՐԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ

ԶԵՌՆԱՐԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎԻ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻՆ
ՈՒ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԻՆ ՈՒՅՆԴԱԿՈՂ
(ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՀԱՄԱՐ)



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ-Ի ՖԻՆԺՈՂԿՈՄԱՏԻ

ՅԵՐԵՎԱՆ

1933

332
7-48

15 JAN 2010

Apr.
2-54842

984

**ՊԵՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ
ԽՆԱՑԴՐԱՄԱՐԿՆԵՐԻ
ԳՈՐԾԱՐԻՔԸ**

Պետական ներքին վարկի լայն ծավալումը, մեր յերկրի աշխատավորության բարեկեցության բարձրացման հետեւանքով, նոր պահանջներ ե դնում ամբողջ հասարակայնության և խորհրդային մարմինների առաջ պետական փոխառության պարտատոմսատերերին և ավանդատուներին սպասարկելու գործում:

Իրավիճակ պարտատոմսատերերի և ավանդատու 40 միլիոն աշխատավորության կանոնավոր սպասարկումը վճռական նշանակություն ունի նրա ազատ միջոցները հսկա սոցիալիստական շինարարության մեջ ներդրումելու համար:

Ժողովրդական անտեսության վերականգնման համար արդեն ստեղծել և ունենք սեփական բաղա: Դա մեր ծանր արդյունաբերություն և:

Իրական փաստ ե համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ ընկ. Մոսկովիի նշանաբանը՝ «Հասնել և անցնել անտեսապես ու տեխնիկապես առաջավոր կապիտալիստական յերկրներին»:

Բավական ե նշել ունեցած մեր նվաճումներից մի քանիսը, վորպեսզի պարզ պատկերաց-

Պետհրապի Տպարան Սրբագրեց Հ. Մայիլյան

Գլավկտ 8909 պատվեր 2058 տիրաժ 3000

ANB. № 20896

ներք այն հոյակապ շինարարության արդյունքները, վորոնց կերտողը հանդիսացել է Միության բանվոր դասակարգը և վորը աշխատավորությունը Կոմկուսակցության ղեկավարությամբ:

Աճում է կոլտնտեսությունների և խորհրդային տնտեսությունների ցանցը: ԽՍՀՄ-ն առաջինն է դարձել ամորիջ աշխարհում իր խոշոր գյուղատնտեսությամբ: Նախկին ցարական Ռուսաստանի, ճնշված, հետամնաց և յերբեմնի գաղութի վերածված ծայրամասերում, մենք ունենք աննախընթաց և չտեսնված վերելք:

Կոլտնտեսությունների մեջ այժմ ընդգրկված է աշխատավոր գյուղացիության չքավոր ու միջակ տնտեսությունների 62 տոկոսից ավելի: Յերկրի ցանվող հողամասերի 80 տոկոսը պատկանում է կոլտնտեսություններին և խորհրդատնտեսություններին:

Անորինակ թափ ու ծավալ է ստացել գյուղատնտեսության մեքենայացման գործը: Արագորեն զարգանում և աճում են մեր յերկրի ՄՏԿայանները:

Համկոմկուսի Կենտկոմի և ԿՎՀ-ի հունվարյան պլենումի վորոշմամբ ՄՏԿ-ներում կադմակերարված քաղբաժինները հզոր լծակ հանդիսացան գյուղատնտեսության բարձրացման, կոլտնտեսությունների կազմակերպչական և տնտեսական ամրապնդման համար:

Համաշխարհային նշանակություն ու-

նեցող պատմական նոր խնդիրները պետք է լուծվեն յերկրորդ հնգամյակում:

Արդյունաբերության հսկաների լրիվ յուրացումը, Ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման ավարտումն ու արտադրության վերելքն, աբտադրանքի բարձր վորակը, վերջապես սոցիալիստական անդառակարդ հասարակարգի կառուցումն, ահա այն տնտեսական և քաղաքական կարեվորանգուն խնդիրները, վորոնք պետք է ստանան իրենց բոլջևիկյան լուծումն այս հնգամյակում:

Այդ մեծ խնդիրների իրագործման համար անհրաժեշտ է մեր յերկրի վորջ ուժերի և միջոցների լարում: Միության բանվոր դասակարգը և վորջ աշխատավորությունը կապիտալիստական չրջապատի թշնամական պայմաններում կարողացան ավարտել չորս տարում առաջին հնգամյակում յերկրի ինդուստրացումն ու հաջողությամբ լուծելով ո՞վ-ումի պրոբլեմը՝ ինչպես քաղաքում, նույնպես և գյուղում, ջախջախելով կուլակությունը վորպես դասակարգ, ստեղծեց բոլոր տվյալները սոցիալիստական անդառակարդ հասարակակարգի կառուցման համար: Այդ նույն բանվոր դասակարգը և վորջ աշխատավորությունը հաջողությամբ կլուծեն նաև յերկրորդ հնգամյակի մեծ պլանի կատարման խնդիրը Կոմկուսի ղեկավարությամբ:

Սոցիալիստական շինարարությանը մասնակցելու և ոժանդակելու ձեվերից մեկը բը-

Նախընտրական ազատ միջոցների մոբիլիզացիան
և հանդիսանում:

Փոխառությունների և խնայողության
միջոցով աշխատավորությունը նպաստում է
հսկա շինարարությանը:

Բանվորները, կոլտնտեսականները և վոլջ
աշխատավորությունն արդեն գիտեն խնայ-
դրամարկղների նշանակությունն այս գոր-
ծում: Դրա մասին վկայում է այն խանդավա-
ռությունը, վորը հայտնաբերվել է փոխառու-
թյունների բաժնեդրվելու ժամանակ ինչպես և
վկայում է ավանդատուների քանակի ավելա-
ցումը:

Պետք է ասել, վոր խնայդրամարկղների
ավանդները և փոխառությունը հանդիսանում
են վորպես աշխատավորության ազատ միջոց-
ների մոբիլիզացիայի կարևոր աղբյուրներ և
այդ տեսակետից մեր պայմաններում խնայ-
դրամարկղները պետք է ունենան ամենալայն
հնարավորությունը զարգանալու համար:

Սակայն, չնայած այն նշանակությանը և
պահանջներին, վոր դնում է Կոմ. Կուսակցու-
թյունը և կառավարությունը, այնուամենայ-
նիվ խնայդրամարկղները դեռևս չեն կարողա-
ցել իրենց աշխատանքները դնել այնպիսի
բարձրության վրա, վորպեսզի որինակելի ձե-
վով սպասարկեն ավանդատուներին:

Խնայդրամարկղների գործն այսուհետև
պետք է դառնա մասսաների սեփականություն

և միայն մասսայական հիմունքներով տարվող
աշխատանքով պետք է զարգանա, կարգավորվի
և ծավալվի նրա ամբողջ գործունեյությունը:

Առաջին հերթին նա պիտի ստանա պետ-
վարկին ոժանդակող հանձնաժողովների ոգ-
նությունը, վորոնք վերջերս մեծացել և ամ-
բացել են:

Միութենական Ժողկոմխորհի հունիսի
20-ի վորոշումը, վոր պարտավորեցնում է
խնայդրամարկղներին վերջնականապես կար-
գավորել աշխատավորության սպասարկման
գործը և պայքարել ակտիվ ավանդատուի հա-
մար, պետք է իրականացվի լիովին:

Վոլջ հասարակայնության պարտակա-
նությունն է իր հսկողության տակ առնելով
խնայդրամարկղի աշխատանքները, դարձնել
այդ հիմնարկը աշխատավորության ամենա-
ճոտ և կենսական նշանակություն ունեցող
հիմնարկ, նպաստելով միաժամանակ գոր-
ծարքների ծավալմանը և ավանդների ներ-
դրամանը:

Դրա համար պետք է իմանալ խնայդրա-
մարկղների ֆունկցիաները:

Խնայդրամարկղները կատարում են հիմ-
նականում հետևյալ գործարքները.

1. Ավանդային անկանխիկ հաշվարկում-
ներ.

2. Ակկրեդիտավային

3. Փոխադրումներ.

4. Ֆոնդային.

5. Կոմիտան.

6. Կյանքի ապահովագրություն.

7. Դրամարկղահաշվարկային դնրծարքներ (կոյտնտեսությունների, խորհանտեսությունների և ՄՏԿ սպասարկում):

Խնայելըամարկղներն ընդունում են, վորպես ավանդ աշխատավորության խնայողությունները:

Խնայելըամարկղի ավանդատու կարող է լինել ամեն մի քաղաքացի (ինչպես չափահասները նույնպես և անչափահասները):

Խնայելըամարկղի ավանդատուներին տրվում է մի շարք արտոնություններ և իրավունքներ:

ա) Ավանդը խնայելըամարկղներում անձեռնմղելի է և յենթակա չէ կալանքի:

բ) Ավանդը դադարի է և վոչ մի տեղեկություն ավանդի դումարի մասին, բացի իրեն տվանդատուից այլ անձնավորություններին կամ հիմնարկ-ձեռնարկություններին — բացի դատախազությունից (յեթե ավանդատուն կատարել է քրեական հանցադործություն) — չի տրվում: Խնայելըամարկղում աշխատող անձինք յեթե չպահպանեն ավանդի դադարադահությունը, յենթարկվում են քրեական պատասխանատվության:

դ) Ավանդը կարելի է կտակել: Յուրաքանչյուր չափահաս ավանդատու կարող է իր ավանդը կտակել իր մահից հետո ժառանգներին հանձնելու համար: Ավանդը կարելի է կտա-

լիել վոչ միայն որինական ժառանգներին, այլ և ուրիշներին, լինի դա վորեւե անհատ, թե կազմակերպություն: Դա վերապահվում է ավանդատուի ընտրությանը:

դ) Ավանդներից ստացված յեկամուոր յենթակա չէ հարկման: Այն ավանդները, վորոնք կտակային կարգադրությունից հետո անցնում են այլ անձանց, ազատվում են ժառանգական տուրքից:

ԱՎԱՆԴԱՅԻՆ ԳՈՐԾԱՐԲՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ավանդները լինում են վոչ ժամկետային, ժամկետային պայմանական, անտուկոս-չահող և ընթացիկ հաշվով:

Ամենատարածված ձեվը. — դա վոչ ժամկետային ավանդի ձեվն է, յերբ ավանդատուն կատարելով առաջին մուծումը, վոչ պակաս 5 ռուբլուց, հետագայում ցանկացած րուպլային մուծում է նոր գումարներ կամ ստանում է իր ավանդները:

Ֆիդիքական անձնավորության վոչ ժամկետային ավանդին տրվում է 8 տոկոս տարեկան, իսկ իրավական անձանց 6 տոկոս:

Ժամկետային ավանդը ընդունվում է ֆիդ ավանդատուներից նմենապակասը 3 ամիս, իսկ իրավական ավանդատուներից 6 ամիս ժամանակով, հաշվելով ֆիդավանդատուներին տարեկան 9-տոկոս- իրավական անձերին-7 տոկոս: Ժամկետային ավանդը վորոչված ժամանակից շուտ չի վերադարձվում: Յեթե լա-

ցառիկ դեպքերում վերադարձվի, ապա դա՛հաչվում է վորպես վոչ ժամկետային ավանդ։
Ժամկետային ավանդի լրացուցիչ մուծում՝ չի թույլատրվում կատարել։ Նման մուծումները ձևակերպվում են առանձին, վորպես բա՛կդրնական մուծում։

Ժամկետային ավանդի սկզբնական մուծումը պետք է լինի 10 ո. վոչ պակաս՝ Ֆիզա՛վանդատուններից և 25 ո. վոչ պակաս իրավա՛կան անձերից։

Պայմանական ավանդ կոչվում է այն ավանդը, վոր կարող է ընդունվել միայն ավանդատույի կողմից առաջագրված պայմանով։ Սկզբնական ավանդի մուծումը ձևակերպելիս պետք է ընդունել ավանդատույից այնպիսի պայման, վորը չի հակասում որենքներին և կարելի է հաստատել նրա իրականացումը։

Անտոկոս շահող ավանդը ընդունվում է միայն այն դրամարկդներում, վորոնց թույլատրվում է կատարել այդ գործարքը։ Այդ ավանդների յեկամուտը տրվում է վոչ թե տոկոսներով, այլ շահումով։ Անտոկոս-շահող ավանդ կարող են ունենալ միայն Ֆիզիքական անձինք, վորոնց սկզբնական մուծումը 10 ո. պակաս չէ։ Իրավական անձինք այդպիսի ավանդ ունենալ չեն կարող։ Անտոկոս-շահող ավանդների խաղարկությունը կատարվում է տարեկան 4 անգամ՝ յուրաքանչյուր յեռամսյակում։ Խաղարկությանը կարող են մասնակցել անտոկոս շահող ավանդ ունեցող այն ա՛-

վանդատուները, վորոնց ավանդի մնացորդը տվյալ յեռամսյակում չի իջել 10 ոուբլուց և վորոնց ավանդը մնացել է խնայդրամարկդում առնվազն մեկ ամիս մինչև յեռամսյակի վերջը։

Շահում է 20 ավանդից մեկը, յուրաքանչյուր շահող ավանդատուն ստանում է յեռամսյակի ընթացքում իր ավանդի կայուն մնացորդի 50 տոկոսը։

Ընթացիկ հաշիվ կարող են բանալ խնայդրամարկդներում թե Ֆիզիքական և թե իրավական անձինք։ Այդ հաշիվը տարբերվում է սովորական վոչժամկետային ավանդից նրանով, վոր կարգադրությունները իր ավանդի վերաբերյալ խնայդրամարկդին, ավանդատուն կատարում է չեկի միջոցով։ Ներկա դեպքում խնայդրքույկին փոխարինում է հաշվեգրքույկը և չեկի գրքույկը։ Առաջինով ավանդատուն կատարում է իր մուծումները, վերջինով ստանում է իր ավանդը անձամբ, կամ չեկը համապատասխան ձևակերպումից հետո տալիս է այն անձնավորությանը, վորին ինքը իրավունք է վերապահում այդ գումարը ստանալու։ Չեկը անպայման պետք է ստորագրված լինի ավանդատույի կողմից, (վորի ստորագրության նմուշը գտնվում խնայդրամարկդում) և լրացված լինի ճիշտ ու առանց ջնջումների և ուղղումների։

Իրավական անձանց կողմից ներկայացված չեկը, բացի դրանից պետք է նաև կնքված լինի

տվյալ հիմնարկ-ձեռնարկի, կամ կազմակերպութեան կնիքով:

Լրացված չեկը ուժի մեջ է 10 օր, հաշվելով գրված օրից: 10 օրից հետո ժամկետանց չեկով խնայդրամարկդը վճարում չի կատարում, ուստի այդպիսին փոխարինվում է նորով:

Քանի վոր չեկը պետք է լրացված և ստորագրված լինի ավանդատույի կողմից, հետևյալն անդրագետներին և այն անձաց համար, վորոնք չեն ցանկանում անվանական ավանդուհենալ, այլ բացում են վոչ անվանական հաշիվ (ըստ ներկայացնողի), խնայդրամարկդը այդպիսիներին համար ընթացիկ հաշիվ բացել չի կարող: Ընթացիկ հաշիվով ավանդատույին տրվում ֆիզանձնավորութեանը 8 տոկոս, իրավական անձին 6 տոկոս:

ԱՆԿԱՆՈՒԿ ՀԱՅՎԱՐԿՈՒՄՆԵՐ ՅԵՎ ԺԻՐՈ-ԳՈՐԾԱՐԲՆԵՐ

Ժիրո-գործարքներ կատարում են Հայաստանի միայն յերկու քաղաքները՝ Յերեվան և Լենինականը:

Ժիրո-գործարքները հնարավորութեամբ են տալիս ընակչութեանը անկանխիկ հաշվարկումով ավանդից գումարներ փոխադրել այն հիմնարկի հաշիվին, վորոնց պարտք են: Այդ-

պիսով նրանք տնտեսում են իրենց ժամանակը և պետութեան տրամադրութեան տակ թողնում ժամանակավորապես ազատ գումարները սոցիալիստական շինարարութեան ֆինանսավորումը ուժեղացնելու համար:

Անկանխիկ հաշվարկման միջոցով՝ կարելի չէ մուծել մասսայական վճարումները, լույսի, ռադիոյի, ջրի վարձը, բնակավարձը և այլն: Հիշյալ գործարքը կատարելու համար, ավանդատուն լրացնում է փոստ քարտի ժիրո-հրամանը (այդպիսիք պետք է ստանալ խնայդրամարկդներում), վորտեղ ցույց է տալիս համապատասխան տեղում մասսայական վճարման օրյեկտը, վոր ամիսների համար է մուծում, ընդհանուր գումարը և իր ավանդի անձնական հաշիվի քարտի №-ը, վորից պետք է կատարել փոխանցումը, ապա ստորագրում է փոստ քարտը: Այդ քարտի հիման վրա խնայդրամարկդը կատարում է նրա կարգադրութեամբ (հրամանը):

ԱՎԿՐԵԴԻՏԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԱՐԲՆԵՐ

Ակրեդիտիվային գործարքը հնարավորութեամբ է տալիս քաղաքացիներին վորևէ տեղ մեկնելիս (արձակուրդ - բուժման, գործուղման) չվերցնել կանխիկ դրամ, վորը ճանապարհին կարող է հափշտակվել, կամ կորցվել, այլ վերցնել խնայդրամարկդում ակրեդիտիվ, վորով իր մուծած գումարը վողջ

ԽՍՀՄ-ի ցանկացած դրամարկղում ստանալ մաս-մաս կամ լիովին իր ավանդը:

Ակկրեդիտիվը տրվում է 500 ուռըլուց վոչ ավել գումարի համար: Յուրաքանչյուր հաճախորդ մի դրամարկղում կարող է ստանալ միմիայն մեկ ակկրեդիտիվ և բացառիկ դեպքերում վարիչի կարգադրությամբ յերկուսը:

Ակկրեդիտիվները տրվում են առաձին անհատներին վորպես անվանական փաստաթուղթ: Իրավական անձանց ակկրեդիտիվ չի տրվում: Ակկրեդիտիվը տրվում է չորս ամիս ժամանակով, չորս ամիսը լրանալուց հետո ակկրեդիտիվում յեղած մնացորդը վճարվում է այն խնայդրամարկղում, վորը առաջին անգամ տվել է ակկրեդիտիվը: Ակկրեդիտիվով լրացուցիչ մուծում չի ընդունվում այլ տրվում է նոր ակկրեդիտիվ: Ակկրեդիտիվով վճարում կատարում են բոլոր խնայդրամարկղները, բացառությամբ 1-ին կարգի գործադաշտային յուրաններից, վորոնց թուլյատրվում է, միայն, կուլտուրային վայրերում կատարել 100 ո. սահմաններում ակկրեդիտիվային վճարումներ:

Ակկրեդիտիվը բաղկացած է յերկու մասից՝ ակկրեդիտիվից և ստուգիչ թերթից, վորպիտիք հաճախորդը ստանալուց պետք է պահի տարբեր տեղերում, վորպեսզի հափշտակման և կորստի դեպքում, գտնողը չ'կարողանա դրամ ստանալ, քանի վոր դրամը ակկրեդիտի-

վայ ստանալուց անհրաժեշտ է ներկայացնել յերկու փաստաթուղթը միասին:

Ակկրեդիտիվի բլանկը արժե 50 կոպեկ

ՓՈՒՍԱԴՐՈՒՄՆԵՐ

Ավանդատուներին լիակատար կերպով սպասարկելու համար խնայդրամարկղները կատարում են նաև փոխադրական գործարքներ: Յուրաքանչյուր ավանդատու մի վայրից մի ուրիշ վայր փոխադրվելու դեպքում կարող է կարգադրել, վոր իր ավանդը փոխադրեն տրվյալ վայրի մի վորեւե այլ խնայդրամարկղ: Ավանդատուն կարող է կարգադրել նաև նրա ավանդի մի մասը միայն փոխադրել ուրիշ խնայդրամարկղ մեկի հաշվին փոխանցելու կամ կանխիկ վճարելու նպատակով: Վերջապես բացի ավանդատուներից յուրաքանչյուր քաղաքացի կարող է կանխիկ դրամ մուծել ցանկացած խնայդրամարկղը մի ուրիշ ցանկացած խնայդրամարկղում կանխիկ ստանալու նպատակով:

Բոլոր դեպքերում էլ խնայդրամարկղը կատարում է համապատասխան ձեւակերպում, տալով ավանդատույին փաստաթուղթ, հանձնարարության կատարման համար (անդորրագիր ձև № 31):

Ավանդատուն իր կարգադրությունը ավանդի կամ գումարի փոխադրման նկատմամբ կատարում է գրավոր հայտարարություն տալու միջոցով:

Խնայդբամարկղները այդ դեպքերի կատարման համար վերցնում են փոխադրողից կոմիտիոն վարձատրություն, համաձայն հատուկ տարիֆի: Ֆիզանձնավորություններից փոխադրելու համար կանխիկ դրամով ընդունել (կանխիկ դրամով տեղում վճարելու համար) թույլատրվում է 1000 ռ. սահմաններում:

ՖՈՆԴԱՅԻՆ ԳՈՐԾԱՐԲՆԵՐ

Խնայդբամարկղները կատարում են մասնաշաղկան և շուկայի փոխառությունների գրնում և վաճառք: Ստուգում են պարտատոմսերը համապատասխան տղյուսակներով, կատարում են շահումների վճարում, ի պահ են ընդունում պարտատոմսատերերից պարտատոմսեր և յուրաքանչյուր խաղարկությունից հետո ստուգում այդպիսիք:

Խնայդբամարկղները տալիս են փոխառություն — (ссуда) — մասնաշաղկան փոխառությունների 60 տոկոսի չափով, իսկ շուկայի փոխառությունների 70 տոկոսի չափով, հետագայում մաս-մաս կամ լիովին մարելու պայմանով:

Մասնաշաղկան փոխառությունները (3-րդ ինդուստրացման», «5-ամյակի 4 տարում», «3-րդ վճռական», «4-րդ ավարտական») կարելի չէ վաճառել և դրավ դնել միայն ոժանդակող հանձնաժողովների թույլատրությամբ:

ԿՈՄԻՏԻՈՆ ԳՈՐԾԱՐԲՆԵՐ

Խնայդբամարկղները կատարում են նաև կոմիտիոն դործարքներ, ըստ վորում համապատասխան հիմնարկից կամ կազմակերպությունից ստանում են այդ դործարքների կատարման համար վարձատրություն:

1—Վճարում են անհատական և ուսուցչական թոշակներ:

2—Վաճառում են վիճակախաղի տոմսեր և վճարում շահումներ:

3—Վաճառում են փոստանիշներ:

4—Ընդունում են կուս. և ԼԿՅԵՄ անդամավճարներ և այլն:

ԳՐԱՄԱՐԿԱՆ-ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՐԲՆԵՐ

Գյուղական խնայդբամարկղների ցանցի ամրացումը, պահանջում է խնայդբամարկղներից բանվորության, կոլտնտեսական մասնաշաղկան, կազմակերպված սեկտորի և վողջ աշխատավորության կանոնավոր սպասարկում:

Կոլտնտեսությունների, խորհանտեսությունների, գյուղխորհուրդների դրամարկղային ըսպատարկումը պետք է կատարվի խնայդբամարկղների միջոցով: Խնայդբամարկղներին աշխատանքի այդպիսի ձեռնարկումը հնարավորություն կտա խնայդբամարկղներին ավելի ուժեղ կապ հաստատել գյուղի հետ և ապահովել ավանդների պլանի հաջող կատարումը:



Բացի այդ խորհանտեսություններին և կոլտնտեսություններին սպասարկելով, հնարավորություն կատելծվի կոլտնտեսականների և խորհանտեսությունների բանվոր-ծառայողների համար պահել իրենց ազատ միջոցները խնայդրամարկղում և ոգտվել այն հարմարություններից, վոր տալիս են խնայդրամարկղները ավանդատուներին (պարտատուների ստուգում, շահումների վճարում, ավանդի փոխադրում կամ փոխանցում զանազան մասսայական վճարումների դեմ և այլն) :

ԿՅԱՆԲԻ ԿՈՆԵԿՏԻՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Աշխատավորության կյանքի կոլեկտիվ ապահովագրությամբ կարող են ապահովագրվել՝

ա. Նույն ձեռնարկում, հիմնարկում կամ խորհանտեսությունում աշխատող բանվորներն ու ծառայողները.

բ. Նույն կոլտնտեսության (կոմունայի, գյուղատնտեսական արտելի, միատեղ մշակող ընկերության) անդամները և

գ. Արտելում աշխատող կոոպերացված տնայնագործները (կոոպերատիվ ընկերության անդամները) :

2. Կոլեկտիվ ապահովագրությունն անց և կացվում ձեռնարկի, հիմնարկի կամ խորհտնտեսության, կոլտնտեսությունների, արհեստագործական կոոպերատիվ և նման ընկերու-

թյունների վարչությունների, ինչպես և կից գործող փոխադարձ ոգնության դրամարկղների կամ այդ կոլեկտիվների հասարակական այլ կազմակերպությունների հետ պայմանագրեր կնքելու միջոցով, յեթե միայն այդ կազմակերպությունները պայմանագրեր կնքելու իրավունք ունենա :

3. Ապահովագրության պայմանագրերի կնքման համար անհրաժեշտ է, վոր կոլլեկտիվի ապահովագրվող անդամների թիվը, տվյալ կոլեկտիվի անդամների 50 տոկոսից պակաս չլինի: Ապահովագրության պայմանագրերի ժամկետի ընթացքում, ապահովագրվածների թիվը 50 տոկոսից ցած իջնելու դեպքում, պայմանագիրը չի խախտվում: Պայմանագիր կնքող իրավական անձն ապահովագրող է հանդիսանում :

4. Կոլեկտիվ ապահովագրություն կնքելու համար ապահովագրող կազմակերպությունը պետաշխխնայդրամարկղին ներկայացնում է ապահովագրվողների սահմանված ձևի ցուցակը յերկու որինակից :

5. Առանձին կոլեկտիվի ապահովագրությունը կնքվում է բոլոր ապահովագրվողների համար հավասար դումարով այն է 500-1000, 1500 կամ 2000 ոուբլու չափով ամեն մեկի համար :

ՄԱՀԱՆ ԳԵՂԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

6. Կյանքի կոլեկտիվ ապահովագրութիւնը կատարելուց հետո, Պետինայգերամարկոյը և Պետովարկային գլխավոր վարչութիւնը պատասխանատու յեն՝ ա) ապահովագրվածի վորեւ պատճառով մեռնելու համար, բ) դժբախտ պատահարների պատճառով աշխատունակութիւնը ընդմիջտ (լրիվ կամ մասնակի) կորցնելու համար:

500 ռուբլու ապահովագրութիւն վճարը մուծվում է տարեկան 6 ռ. չափով:

Ավել գումարով 1000 ռ. 1500 և 2000 ռուբ. ապահովագրելու դեպքում ապվճարը գանձվում է համապատասխանորեն տարեկան 12, 18 և 24-ի չափով:

7. Ապահովագրութիւն պայմանագիրը կնքվում է մեկ տարի ժամանակով: Տարին անց նելուց հետո ապահովագրութիւնը կարելի յե նորոգել նորից մեկ տարով:

8. Ապահովագրման պատասխանատուութիւնը սկսվում է այն օրվա ժամը 24-ից, վոր օրն ապահովագրվածը դրամարկդ է մուծել յապահովագրի վարձը:

9. Յուրաքանչյուր ժամկետի ապահովագրման վճարներն ապահովագրողը մուծում է միա ժամանակ բոլոր ապահովագրվածների համար նախօրոք և վոչ ուշ քան ապահովագրի մեջ ցույց տված ժամկետից:

10. Կոլեկտիվ կերպով ապահովագրվածների մահվան դեպքում, ապահովագրական գումարը վճարվում է անկախ մահվան պատճառից, բացի հետեյալ պատճառներից առաջացած մահվան դեպքերից ա) ապահովագրական գումարը ստանալու համար ապահովագրվածի չարամտութիւն, բ) ապահովագրվածի նկատմամբ սոցիալական պաշտպանութիւն դերագույն միջոց կիրառելու և գ) ռազմական դործողութիւնների հետեւանքով խռաջացած մահվան դեպքերից:

11. Ապահովագրվածի մահվան դեպքում ապահովագրութիւն գումարը վճարվում է անմիջապես:

12. Գումարն ստանալու համար ապահովագրողը պետք է ներկայացնի պետինայգերամարկոյներին հետեյալ փաստաթղթերը՝

ա. Զազսի վկայական-ապահովագրվածի մահվան մասին.

բ. Հիվանդին բուժող բժշկի վկայականը մահվան պատճառի մասին, յեթե Զազսը վկայականում մահվան պատճառը չի ցույց տվել:

դ. Ապահովագրական գումարը ստանալու համար անձնավորութիւն նշանակելու հայտարարութիւնը (յեթե յապահովագրվածը այդպիսին ներկայացրել է ապահովագրվողին):

ՊԵՏՎԱՐԿԻՆ ՅԵՎ ԽՆԱՅԳՈՐԾԻՆ ՈՒՄՆԴԱԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Ութանդակող հանձնաժողովների հիմնական պարտականութիւններն են՝

1. Կառավարութեան կողմից բաց թողնված փոխառութիւնների իրացման կամ պանիաների կազմակերպման դործը:

2. Հետեւողական ազիտ-բացատրական աշխատանքի ծավալումը կոլեկտիվներում, կոլտնտեսութիւններում և գյուղերում, փոխառութեան ու ավանդների դժուր:

3. Փոխառութեան, ավանդների կամ կյանքի ապահովագրութեան կամ պանիա անցկացնելու դեպքում ութանդակող հանձնաժողովները կազմակերպում են մասսայական ժողովներ, վորտեղ ղեկում են զեկուցումներ վերահիշյալ խնդիրների մասին, ընտրում են հավաքագրողներ (վերբովչիկ): Վերջինները լրացնում են փոխառութեան իրացման թերթիկները և հանձնում վարչութեանը, խնայես և ներգրավում են նոր ավանդատուներ, աշխատակիցներին հատուկ ուղեգրով ցանկացած խնայեցմարկղը ուղարկելու համար:

Փոխառութեան իրացման ձեւակերպումը, պահումները, հերթական մուծումները և դրա ընթացքի մասին տեղեկութիւնները կատարում ու տալիս են հիմնարկ-ձեռնարկի հաշվաշին ապարատը: Ութանդակող հանձնաժողովները պետք է հետեւեն ստորին հաշվաշին ապարատի

դործնեյութեանը և կարող են վարչութեանը ան դործնեյութեան դեպքում, կանչել պատասխանատւութեան:

4. Կարեւոր տեղ է բռնում ութանդակող հանձնաժողովների համար ավանդատուների և պարտատոմսատերերի սպասարկման խնդիրը:

Ութանդակող հանձնաժողովները խնայեցմարկղների ոգնութեամբ իրենց կոլլեկտիվներում, կոլտնտեսում, ախումբներում, գյուղխորհուրդներում և կոլտնտեսութիւններում պետք է կազմակերպեն ավանդատուների համար տեղեկատու սեղաններ կամ անկյուններ, վորտեղ պետք է կատարեն պարտատոմսերի ստուգում աղյուսակներով և ցուցակագրեն կոլեկտիվի այն անդամներին, վորոնք կցանկանան ավանդատու դառնալ:

5. Ութանդակող հանձնաժողովները պատի լրագրում պարբերաբար պետք է լուսաբանեն իրենց աշխատանքներին վերաբերող հարցերը կա լին աչքի ընկնող տեղում շահող պարտատոմսատերերի ազգանունները (յեթե դրա համար կա պարտատոմսատիրոջ թուղթ-տվութիւնը): Անհրաժեշտ է ամենաապիտի ավանդատուներից և պարտատոմսատերերից կազմակերպել խմբակ, վորը պետք է տանի հարատե աշխատանք կոլեկտիվի անդամների մեջ, կազմակերպի սոցմըցում մյուս կոլլեկտիվների հետ և բուքսիւրի վերցնի հետամնաց և թուղթ ութանդակող հանձնաժողովներին:

Արմ.

2-5484a

6. Ոժանդակող հանձնաժողովների ամենա-
շուրջ աշխատանքներից մեկն է պարտատոմսերի
վաճառքի և գրավ դնելու թույլատվություն
տալու գործը:

Թույլատրություն տալու ժամանակ ոժան-
դակող հանձնաժողովները պետք է ունենան
յուրաքանչյուր առանձին դեպքում հատուկ ան-
հատական մոտեցում, հաշվի առնելով այն բո-
լոր պայմանները, վորոնք կապված են թույլ-
տվության հետ:



<< Ազգային գրադարան



NL0204261